

Տարեկան գինը 10 բուլի, կէս տարվան 6 բուլի.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ Ե Ք Օ Ն № 258.

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողաւորին 10 կոպէկ.
Տ է Լ Ե Ք Օ Ն № 258.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արմատական բարեփոխութիւնների միջոցով.
Ներքին ՏԵՍԻՍԻՒՆ. Արմատականներ. Նա-
մակ Արապյայից. Նամակ Խմբագրութեան.
Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍԻՍԻՒՆ.
Արմատական լուրեր.—ՀԵՌԱՔԻՆ ՏԵՍԻՍԻՒՆ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՒՆԱԿԱՆ.
Նամակ Գերմանիայից:

ԱՐՄԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՄԻՒՆԻՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Դիտողութիւնները ցոյց են տալիս, որ
այն անձինք, որոնք փակված եւ նստած
կանք են վարում եւ չեն օգտվում մարդու
օրից, մեծ զոհեր են տալիս թոքախտին:
Ոստանանքները, կոշակարները, դերձակ-
ները, գրաշարները, որոնք ստիպված են
լիտ օդ չնել եւ մանր փոշի կուլ տալ—
մաշկութեան թւերի ցուցակում ա-
ռաջնակարգ տեղն են բռնում:

Գիւղական ժողովուրդը, չը նայելով իր
աշխատանքի ծանրութեան, բայց շնորհիւ
այն հանգամանքի, որ այդ աշխատանքը
կատարվում է բաց օդում, ամենաքիչ
զոհն է տալիս թոքախտին: Նկատված է,
որ գիւղական կանայք, որոնք համեմատա-
բար աւելի փակված կանք են վարում,
աւելի յաճախ եւ մեծ թւով են հիւանդա-
նում թոքախտից, քան տղամարդիկ: Գիւ-
ղական ժողովուրդին մօտ են իրանց քիչ մա-
հացութեամբ այգեգործները, անտառա-
պահները եւ այն պաշտօնները, որոնք
մշտապէս բաց օդի մէջ են գտնվում: Գիւ-
ղական քահանաները աւելի սակաւ չա-
փով են մեռնում թոքախտից, քան քա-
ղաքի քահանաները: Մի խօսքով՝ գիւղա-
կան ժողովուրդի բաց օդի մէջ վարած
կենքը մի հաստատ գրաւական է նրա
պահպանութեան համար թոքախտի դէմ:

Հասկանալի է, որ թոքախտի դէմ մա-
քառելու ամենազիւստուր պայմանը պէտք
է այն լինի, որ բարեփոխվի կենցաղավա-
րութեան եղանակը եւ մարդիկ կարողու-
թիւն ունենան մարդու օդ չնել, ազատ
ֆիզիքական շարժումներ ունենալ եւ կազ-
դուրիչ սնունդ ստանալ: Ոչ մի գեղ չէ
կարող օգնել ֆիսիքական, եթէ չարուակ-
վում են նրա կենցաղավարութեան նախ-
կին քաղաքից պայմանները եւ երբ այն, ինչ
ընտրվում է գեղի միջոցով, աւելի եւս

մեծ չափով խորտակվում է կենցաղավարու-
թեան վատ ազդեցութիւններով:

Այդ սարսափելի եւ շատ տարածված
հիւանդութիւնը, որ հնչում տանում է
հաղաքի բնակիչներին 15—20%, կարող է
արմատախիլ լինել միայն այն ժամանակ,
երբ կը վերացվեն այն պայմանները, որոնք
նպաստում են հիւանդութեան զարգաց-
ման: Թոքախտի դէմ պէտք է կուել ընդ-
հանուր ոյժերով եւ ոչ միայն այնտեղ, ուր
արդէն հիւանդներ կան, այլ եւ այնտեղ,
ուր նրանք չը կան, բայց կարող են երե-
ւար թէ աների շնորհիւ, թէ արհես-
տանոցների կառուցման, թէ աշխատանքի
եւ հանգստութեան ժամեր սահմանելու
միջոցին, ամեն տեղ եւ ամեն դէպքում
պէտք է յիշել, որ կայ թոքախտի նման
սակայի մի ուրուական, որ մուտք է գոր-
ծում եւ արմատ է բռնում այն բոլոր տե-
ղերում, ուր առողջապահութեան պա-
հանքները անտես են աւելում:

Ժողովուրդական համատարած հիւանդու-
թեան դէմ անհրաժեշտ են եւ մարառ-
ման ընդարձակ միջոցներ: Այլապէս դը-
ժուր է յաղթել ժողովուրդի առողջութեան
դէմ յանդիման կանգնած այդ կատաղի
թշնամուն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻՒՆ

ԱՐՁԱՅԱՆՔՆԵՐ

LIX

«Յուրաքանչիւր ինքն է հոտած, կարծում է, թէ
բունն է հոտած»,—ասում է ժողովուրդական
ասածը:

Վերջին տարիների ընթացքում մեզանում
գոյացել է յոպոպ գործիչների եւ գործերի
եթէ ոչ մի լէգէն, գոնէ մի փոքրիկ վառ:
Դրանք, այդ յոպոպները, եղել են բոլոր
կուսակցութիւնների մէջ, երկրպագել են
բոլոր աստուածներին, թեղել են այսօր
այնտեղ, ուր երէկ խոնկ էին ծրում, որպէս
զի վաղը լիզեն իրանց թեւերը:

Գրական հոգեմարտիչներ, գաղափարների դա-
ւաններ, գրչակներ, որոնք հայտնաբերի
պատրաստ ըլնակներ ունեն, որպէս զի մէջը
գնեն այս կամ այն անունը, նայելով հանգա-
մանքների բերման եւ անձնական յարաբերու-
թեան, այդ անձնապատիւները շարունակ փո-
ղեր են հնչեցնում եւ թմրուկներ զարկում ի-
րանց մասին:

Նրանք հանձարներ, ամենաքիչը խոշոր տա-

ղանդներ են եւ բարերարել են ազգը ու ան-
չափ աւելի կը բարերարէին, բայց նրանց
հանձարը մնում է գրուանի տակ, նրանց ան-
հուն ընդունակութիւնները մնում են սակա-
ւոր, որովհետեւ մեզանում կուսակցութիւն-
ներ կան, որոնք ազգային կուրսը ասպարէզից
հեռացնում է գիտութեան եւ գեղարուեստի
այդ քուրմերին, օլիմպիական մթնոլորտում
միայն ապրելու ընդունակ այդ քուրմը արա-
րածներին, եւ, որ ամենասարսափելին է, կայ
մի գործող կուսակցութիւն, ազատամիտ, «մա-
կական» կուսակցութիւնը, որ հալածում է բո-
լոր աստուածային կայծով օժտվածներին:

Թող ուրեմն վերանան կուսակցութիւնները,
թող մանաւանդ գետնի տակ գնայ այդ ազա-
տամիտ կուսակցութիւնը, որպէս զի հալած-
ված տաղանդները ազատ ասպարէզ դուրս
գան եւ իրանց շնորհները առատութեան
եղջիւրից թափեն ազգի գլխին:

Այդ բոլորը նրանք, այդ «յոպոպները» կա-
րողանում են ազատ գրել, տարածել, եւ
բնականաբար հարց է ծագում,—ինչո՞ւ նրանք
չեն գրում, չեն տարածում այն գիտական եւ
գեղարուեստական երեւելի գրքերը, որոնք
պէտք է երջանկացնէին ազգը:
Եթէ ազատամիտ կուսակցութիւնը չէ կա-
րողանում խեղդել իրան օր ու գիշեր հայնա-
յոյների ձայնը, ինչպէս կարող է նա խեղդել
զուտ գեղարուեստի եւ գիտութեան ծառա-
յոյների ձայնը:

Ձը կայ այդտեղ արդեօք մի գաղտնիք: Ին-
չո՞ւն է այդ գաղտնիքը: Հարցրէք այդ կու-
սակցատեսններին, այդ կուսակցամարտիներին:
Բայց հաւատացած եղէք, որ նրանք ձեզ չեն
պատասխանի, այլ ջալլէք—Հարցրէք կեր-
պարանք կընդունեն եւ կը լռեն, «ծախելով ան-
պէտք ձեռքերը դատարի կրծքերի վրա»:

Սակայն «արկղիկը շատ հասարակ կերպով է
բացվում»: Նրանք գիտական եւ գեղարուես-
տական գրուածքներ չեն տալիս ազգին, որով-
հետեւ դիտութիւնից բոլորի են, իսկ գեղար-
ուեստական տաղանդ միայն իրանց երեւակա-
յութեան մէջ ունեն, իսկ եթէ մի ժամանակ
ունենայ էլ են մի փոքր տաղանդ, չեն կար-
գացել զարգացնել, չեն կարողացել կատարե-
լագործել, որովհետեւ փոքր ի շատե՞ աշոգ
գրուածքից յետոյ՝ սկսել են հանգստանալ ի-
րանց էժանագին դափնիների վրա, օրօրվում
զանազան երազներից, որոնք այնքան փայ-
լուն են լինում, որքան խոր է նրանց տգի-
տութիւնը:

Ինչ վերաբերում է կուսակցութիւններին եւ

կուսակցականութեանը,—գտէք պատմութեան
մէջ եւ մեր ժամանակներում մի հատիկ մեծ
մարդ, որ այս կամ այն եւ առաւելապէս առա-
ջադիմական կուսակցութեան պատկանելի չը
լինէր:

Վիկտոր Հիւգօ, Ֆրանսիայի ամենամեծ
մարդը, Գլադստօն, Անգլիայի ամենամեծ մար-
դը, Գարիբալդի, Իտալիայի ամենամեծ մարդը,
որոնց կուսակցութեան էին պատկանում եւ
շատ նիզակներ են կոտրել կուսակցական
կուռում, շատ վէրքեր են հասցրել եւ շատ վէր-
քեր ստացել յանուն կուսակցութեան:

Մեծ գիտնականներ, մեծ տեխնիկներ եւ
այն՝ եղել են կուսակցութիւններից դուրս, բայց
մեծ մարդիկ չեն եղել:

Եւ այդ հասկանալի է: Խոշոր գիտնականը,
եթէ նա, այսպէս ասած, «կոտորակ-մարդ» է,
կարող է չը հեռաքրքրվել ուրիշ մարդկանց
վիճակով, կարող է նոյն իսկ ասել, արհամար-
հել նրանց, բայց մեծ մարդը նա է, որ ապրում
է ամբողջ հասարակութեան, ամբողջ ժողովրդի,
ամբողջ մարդկութեան ցաւերով:

Ինչո՞ւն է այդ ցաւերի արմատը, ինչպէս
բուժել նրանց,—այդ մարդիկ ինչպէս երկու
անգամ երկու չորս չը գիտեն: Ոչ մի բազմա-
պատկութեան աղիւսակ, ոչ մի լոգարիթմների
ցուցակ դեռ չէ գտնված հասարակական հար-
ցերի համար, եւ, մի կողմ թողնելով կեղծա-
ւորներին, անկեղծ համոզմաների հայեացք-
ների մէջ ամբողջ անդունդներ են լինում:

Ինչպէս անել:

Գաղափարի մարդիկ մի միջոց են գտել
դրա համար, որ գործ է դրվում սկսած ինն
յունական եւ հռոմէական աշխարհից մինչեւ
մեր օրերը,—այն է՝ միանալ համախոհ մարդ-
կանց հետ եւ միահամուռ ոյժերով ձգտել իրա-
գործելու այն, ինչ որ որոշ տեսակէտից հա-
մարվում է նպաստաւոր հասարակութեան
բարիքին, մարդկանց երջանկութեան, նրանց
կատարելագործութեան:

Մեզ է որոշ հայեացք ունենալ ժողովուրդի
բարօրութեան վրա: Ոչ Մեզ է անել այն
յոգուտ ժողովուրդի, ինչ թելադրում է այդ
հայեացքը: Ոչ Մեզ է այդ բանը անել միա-
ցած ոյժերով, համախոհների օգնութեամբ: Ոչ:
Հապա ինչո՞ւն է կուսակցութեան վնասը:
Կողմնապահութեան, կուսակցական ետակարու-
թեան մէջ, Յարձակվեցէ ուրեմն այդ կողմ-
նապահութեան վրա, հալածեցէք այդ ետակա-
նութիւնը, եթէ դուք ճիշտ որ յանուն գաղա-
փարի էք գործում: Ամեն բան կարելի է ի
չարը գործ դնել: Միթէ նոյն չէ եւ ազգու-

ԲԱՆԱՍԻՒՆԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Հալլէ, օգոստոսի 2-ին

Որովհետեւ Հալլէն, իբրեւ համալսարանա-
կան քաղաք, պակաս տեղ չէ բռնում գերմա-
նական միւս քաղաքների չարքով, ուստի ա-
ւելորդ չենք համարում մի քանի տեղեկու-
թիւններ հաղորդել ընթերցողներին, յուսալով,
որ աւելորդ չի լինի մանաւանդ Գերմանիա
եկող այն երիտասարդների համար, որոնք տե-
ղեկութիւն հունենալով այս կամ այն համա-
լսարանի առաւելութիւններին մասին, բախտի
բերմամբ ընտրվում են որ եւ է համալսարան,
առանց լրջօրէն կռիւլու հանգամանքները եւ
խտիր դնելու մի քանի անհրաժեշտ պայման-
ների մէջ:

Հալլէն գտնվում է Չապէ գետի ափին,
Պրուսիայի Թագաւորութեան Սաքսոնիա նա-
հանգում. (չը պիտի շփոթել Սաքսոնիա թա-
ղաւորութեան հետ): Դիրքը շատ գեղեցիկ է,
օդը մաքուր եւ առողջարար: Անմիջապէս ա-
րեւմտեան եւ հիւսիս արեւմտեան կողմը փո-
ված են չքեր, ընդարձակ անտառներ եւ հրա-
շալի զբոսավայրեր, որոնք անփոխարինելի են
բնակիչների համար ամառվայ շոգին ու «տա-

պին», եթէ կարելի է արանց ամենաառաջ եղա-
նակները չող ու տապ անուանել մեր կովկա-
սի անտառների չող եղանակների համեմատու-
թեամբ:

Մի կողմ թողնելով այլ եւ այլ բազմաթիւ
զբոսավայրերը, ծառաստանները եւ ծառուղի-
ները, յիշե՛ք միայն «Ագուաների կղզի» կոչ-
ված ծառաշատ, անտառապատ զբոսատեղին,
որ իր անունը ստացել է սեւագուլիս թռչուն-
ների անհամար երամբների երբեմնական անհան-
այցելութիւններ ընդունելուց, որոնք մարդու
զուրկ են տանում ժամանակ առ ժամանակ եւ
մեր «Հայաստանի ազուախ» նման զգուհնք
պատճառում բնութեան զրկումը զուարճութիւն
որոնք «Սիրափախուտ» միայնակ մեկնաբոլ-
կին: Աւելորդ ազուա անունը արգելք չի լինի,
որ յիշեալ կղզին հիւանալի զբոսավայր լինի
ծանր աշխատանքներից յետոյ բնութեան զըր-
կում հանգիստ գտնել ցանկացողների համար:
Դրա փոխարէն գալիս է «Սոխակաների կղզին»,
նոյնպէս սաղարթախիտ եւ հսկայական ծառե-
րով պատած մի տարածութիւն, Չապէ գետի
միջեւ, ուր գիշերվալ կիսին իրանց դալայիկ-
ներով հիացում են պատճառում թռչունների
այդ հեղ թագուհիները՝ երաժշտական մասնա-
ճիւղում, շտապում եւ սխալ ուղղել, որպէս
զի անգիտ չը համարված մեկնաբոլի բանաս-
տեղծների կողմից... Ռոմանտիկների տեղ է,
կատարելապէս:

Հալլէն փոքրիկ քաղաք է: Փոքրիկ ասեղով՝

ընթերցողը չը պիտի մի որ եւ է Փիլը գիւղ
կամ Շամախի համարէ. 161,000 բնակիչ ունի,
առանց ուսանողներին հաշուելու: Նահանգա-
կան քաղաք է, նահանգական եւ այլ դատա-
ւաններով ու այնպիսի կանոնաւոր կազմակեր-
պութիւններով—տնտեսական թէ սոցիալական,
որը ուզում էք համարեցէք—որոնց կը նախան-
ձեն իրանց բարեկիրթ ու մայրաքաղաք հա-
մարող շատ քաղաքներ:

Կրթական տեսակէտից անշան տեղ չէ բըռ-
նում Հալլէն: Բացի համալսարանից ունի մի
զլիստուր տղայաց գիմնազիա, քաղաքային գիմ-
նազիա, մի ռեալական, կամ ինչպէս պօլսեցիք
ասում են, իրապա շտակաւ գիմնազիա եւ
նոյնպիսի դպրոց, օրիորդաց երկու բարձր դըպ-
րոցներ (մօտաւորապէս մեր տեղի օրիորդաց
գիմնազիաներին համապատասխան) եւ մի սե-
մինալիստ եւ քաղաքային քաղաքային եւ ժո-
ղովրդական երկուսն ուսումնարաններ, կար ու
ձեւի, համերի ու խուլերի եւ այլ մասնագի-
տական դպրոցներ *): Անշուշտ գիտե՛ք ընթեր-
ցողը, որ, ինչպէս եւ եւրօպական շատ աւե-
րութիւններում, Գերմանիայում ուսումը պար-
տադիր է, այսինքն ամեն մի անձն պարտաւոր
է իր զաւակներին աւելումը ութ տարի ու-

*) Բարեկրթական հիմնարկութիւններից լայնի է
Ս. Սիրիսի եւ Մետաիի հիմնարկութիւնը, որ գրու-
թիւն ունի 14-րդ դարից՝ ծեր եւ հիւանդ չքաւորների
պատասխանելու համար:

սումնարան ուղարկել: Չքաւոր ծնողների դա-
ւանները սովորում են ձրի: Որպէս եւ ամեն
տեղ, համալսարանի եւ գիմնազիաների երես
տեսնում են սովորաբար բախտաւորներին...
այսինքն ունենումների, կամ որպէս օրէն է այս
փուլ աշխարհի՝ «պրօտէկցիա» ունեցողների
զաւակները, իսկ չքաւորները, բանւորների
որդիները բաւականաւոր են միայն ժողովր-
դական դպրոցներով: Այս այստեղ աւարտելով,
իրանց ծնողների վիճակն ամօքեւու համար,
տղաները ծառայ են մտնում, կօպէկներ աշ-
խատում, իսկ աղջիկները... «Որո՞ւ հոգ», որ
այդ արհամարհումների միջից էլ կարող էք
մի մի տաղանդ, գուցէ եւ հանձար դուրս գալ,
բայց անտեսական ծանր հանգամանքների ու
անհաւասարութեան բեռն տակ ճնշվում,
խեղդվում եւ ջախջախվում են նրանք, առանց
մի հետք թողնելու, առանց մի նշող թողնելու
քաղաքակրթութեան պատմութեան մէջ...

Անկարելի է համարվում Անցեաներում յայտ-
նի Illustration-ներից (պատկերազարդ հանդէս)
մէկը մի գեղեցիկ աղջկա պատկեր էր նկարել,
կենսագրութիւնն էլ հետը: Ո՞վ էր այդ աղջի-
կը: Մի բանաստեղծուհի, որ Kellnerin, այ-
սինքն կանանց րէստորանում (Damenkneipe)
ծառայող, սպասուորող աղջիկ է եղել իսկ
Եւրօպայում կանանց րէստորաններում ապա-
սուորող աղջիկները յայտնի է, թէ ինչ դեր
են կատարում: Եւ այդ աղջիկը, յաճախորդնե-
րին «համարյոներ» նուիրող այդ արարածը, մի-

Թեան գաղափարը Եւ միթէ նոյն սխալը չէ, որ անում են կոսմոպոլիտները՝ բացասելով ազգութեան գաղափարը, վնասակար յայտարարելով հայրենասիրութիւնը, որովհետեւ առանձին ազգերի գոյութեամբ են բացատրում պատերազմները:

Ինչպէս ազգերի գոյութիւնը չէ խանգարում մարդկայնութեան գաղափարին, այնպէս էլ ճշմարիտ կուսակցութիւնները գոյութիւնը չէ կարող վնասակար լինել ընդհանուր ազգային շահերին, եւ ինչպէս ամենամեծ մարդասէրները եղել են ամենամեծ հայրենասէրները, այնպէս էլ իրանց հայրենասէր ամենից շատ նուիրված են եղել այն մարդիկ, որոնք կուել են այս կամ այն կուսակցութեան շարքերում:

Վերջերէ, դիցուե, ուստայ գրականութեան կօրիֆէյները, Տուրգենեւի, Ելցերին, Դոստօեւսկի, Նեկրասով—բոլորն էլ կուսակցական մարդիկ են եղել:

Վերջերէ մեր կեանքը Ազգի պարծանքները—Նազարեան, Նալբանդեան, Գալստի-Գալստի, Արծրունի, Բաֆֆի—կուսակցական մարդիկ են եղել:

Նրանց տեղը այժմ ձեզ նեղ է թւում: Ձեր հանձնարը խեղդում է այն օդում, ուր դարգանում էին նրանց տաղանդները:

Գիտենք, գիտենք, յոպոսների բոյները միշտ հոտած են լինում:

S. Յ.

ՆԱՄԱԿ ԱՌԱՋԱՅԻՑ

Օգոստոսի 11-ին

Թէ որքան մեծ վնաս պատճառեցին ս. Փրկիչ եկեղեցու երէցփոխի անկանոն գործունէութիւնը եւ հաշուետուութեան առիթով յարուցած խռովութիւնները—դա արդէն յայտնի է ամեն մի ախարհացուի եւ գործին տեղեակ անձինքներին: Բայց այն բազմաթիւ խռովութիւններին, անբաւականութիւններին, վէճերին եւ կռիւներին, որ տեղի ունեցան այդ առիթով կայացած ժողովներում, մեր ս. Փրկիչ աւագ եկեղեցին այսօր, չնորհիւ այդ խռովութիւններին, մնացել է վերին աստիճանի անխնամ եւ անմխիթար գրութեան մէջ: Այն եկեղեցին, որ տարեկան 20 հազար բուլբուլ առնելի եկամուտ ունի եւ այժմ էլ մի պատկառելի պարտատիր գումար, այս բազմաթիւ խռովութիւններից եւ անխնամութիւններից, քայքայված, միջի չինութիւնները կիսաւեր եւ կիսաշէն, ամբողջ գաւիթը՝ քարերի, փայտերի, փլվածքների, հողերի, կրի ու աւազի կոյտերի մէջ կորել է, իսկ եկեղեցու մէջն էլ պատերը սեւացած ու մորտած, դռները, պատկերները, վարագոյրները եւ միւս զարդերը հնացած, կեղտոտված, գոյները թափված, իսկ խոսքով, եկեղեցին թէ արտաքինով եւ թէ ներքինով, տեսողին մի շատ ցաւալի պատկեր է ներկայացնում: Փակագծի մէջ պէտք է ասենք, որ եկեղեցուն եւ իր շինութիւնների այս կիսավերածան դրութեան ենթարկել էր ինքը՝ երէցփոխ Մուրադեանը, որ անցեալ տարվա սկզբներում քանդակելով զեն նոր էր սկսել իր ծրարած նախագիծով շինել, սակայն ծխականները բողոքի

հիման վրա, հոգեւոր կառավարութիւնը արգելեց եւ դադարեցրեց շինութեան շարունակութիւնը. ուստի մինչեւ այսօր էլ, ահա մօտ երկու տարի է, եկեղեցու շրջակայքը եւ դարձի մնացել են այսպէս քայքայված:

Գանի-ճանի անգամ թէ կիրեղեան եւ թէ Մուրադեան վարդապետների յայտարարութեան օրերով՝ ծխականները ժողովի հրաւիրվեցան, որպէս զի, բոլորովին անկախ երէցփոխական հաշիւներից, գոնէ եկեղեցուն մի քանի անհրաժեշտ վերանորոգութիւններն են.—բայց բոլորն էլ ապարդիւ անցան: Ժողովուրդը առանձն ժողովին մի բան էր միայն պահանջում,—«մինչեւ որ երէցփոխի հաշիւների եւ գործունէութեան քննութեան արդիւնքը իրանց չը ներկայացնի, ոչ մի եկեղեցական վերանորոգութեան չը ձեռնարկել...» Եւ ինչպէս յայտնի է, այդ հաշիւները թիւնն էլ մինչեւ այսօր ոչ մի գրական հետեւանքի չը հասաւ: Երէցփոխի անկանոն գործունէութիւնը եւ հոգեւոր կառավարութեան բռնած անտեղի ընթացքը միանգամայն պատճառ դարձան մեր ժողովուրդեան անվերջ դրդումն եւ անբաւականութիւնները: Ծխականների մեծ մասը հէնց քործի սկզբից նկատելով իրերի դրութիւնը իր իրաւունքի բռնաբարումն եւ հոգեւոր իշխանութեան հակաօրինական վարմունքը, զգուշացելով իրան հետեւ պահեց, ոչ մի եկեղեցական ժողովի չը մասնակցեց. միայն մի մասն է, որ եկեղեցու եւ ժողովուրդեան շահերն աչքի առաջ ունենալով, սկսեց անվերջ կերպով մասնակցել եւ դիմադրել թէ երէցփոխի եւ թէ հոգեւոր կառավարութեան ամեն մի ապօրինի կարգադրութեանը: Ահա այդ պատճառով է, որ մեզանում վերջին երկու տարիներս, ծխական ժողովները առանց վէճերի, ազմուկներին եւ բողոքներին չեն անցնում, որի համար ժողովի հերթական հարցերը մնում են անկատար եւ անորոշելի:

Ինչպէս յայտնի է, ապրիլի 9-ին կայացած ծխականների ժողովում, Մուրադեան վարդապետին աղովզել, ժողովուրդին յորդորելով եւ համազօրելով, իրանց եկեղեցու օգուտը աչքի առաջ ունենալով՝ մի արձանագրութիւն կազմել որպէս զի երէցփոխական գործերից անկախ եկեղեցու անհրաժեշտ վերանորոգութիւններն անհն, սակայն եկեղեցին զուրկ լինելով հաստատ երէցփոխից, կոստատօրինա, նախ քան այդ որոշումները հաստատելը, հրամայեց եկեղեցու երէցփոխի ընտրել եւ ըստ այնմ ձեռնարկել շինութիւններին: Արդէն յայտնի է, որ երէցփոխ ընտրելու համար ծխականները երեք անգամ ժողովի հրաւիրվեցան, սակայն երեքն էլ ապարդիւ անցան եւ եւ մինչեւ այսօր եկեղեցին չունի հաստատ երէցփոխի: Բայց մեզ հարկաւոր է մի արժանատի երէցփոխ, որքան շուտ, այնքան լաւ: Այսօր ամեն մի ախարհացիքի առանց ամաչելու անկարող է ս. Փրկիչ եկեղեցու մօտից անցնել: Ընչ կը նշանակէ, մի երէցփոխի անկանոն գործունէութեան պատճառով, եկեղեցին թողնել այդպէս աւելադասութիւն է ունեն իրանց յատուկ օրգանը: Պէտք է ասած, որ Հայկէ համարվում է առհասարակ սօցիալ-դեմոկրատների կենտրոն *), չնորհիւ այն բազմաթիւ գործարարների, օրոք տեղիս արդիւնաբերութեան գլխավոր կենտրոններն են կազմում: Ի միջի այլոց, յիշատակելու արժանի է աղի արդիւնաբերութիւնը, որով պարագայդերը դեռ 1817 թւին պարտաւոր էին պայմանի համաձայն 82,498 ցէնտներ (դէնարներ—3 պուլ) աղ հատուցանել պետութեանը: Այնուհետեւ նշանաւոր են գարեջրի բազմաթիւ եւ ընդարձակ գործարանները, ջաջարի, շոկոլադի, կակաօի... Ընդհանրապէս—երկաթագործական իրեղենների այլ եւ այլ գործարանները: Գաղաքի գլխավոր հիմնարկութիւնները եւ համարեա բոլոր մեծ խանութները միացած են, լինչ առելիւ, հեռախօսի ցանցերով:

Հաղորդակցութիւնը, բացի կառքերից, կատարվում է էլեկտրով, թէ կարելի է այսպէս ասել, էլեկտրական քարշակներով: *) Գերմանական Ուլիստատում Հայկէ ներկայացուցիչը սօցիալ-դեմոկրատներից է:

նութիւն տալու համար: Ձր թողնենք եկեղեցին այս դրութեան մէջ եւ մի եւ նոյն ժամանակ մեր իրաւունքը եւ թէ եկեղեցու շահերը պաշտպանենք հետեւենք եւ պահանջենք, որ երէցփոխի հաշիւների քննութիւնը իր կարգին առաջ ընթանայ եւ վերջանայ:

Գ.

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, օգոստոսի 17-ին

Պարիզում տպված «Ժամանակ» ամսուով մի տետրակում իր քաջագործութիւններով յայտնի Ս. Հախումեան իրան միայն յատուկ փողոցային ձեւերով հայտնաբերել է թափում ինձ վրա՝ իմ «Հայոց գրականութիւնը XVIII դարում» աշխատութեան ստիժով:

Ես ինձ թոյլ չեմ տալ պատասխանել Հախումեանին, որ վաղուց զրկված է պատասխանի արժանանալու պատուից: Բայց ահա ինչ կայ:

«ԱՐՈՆԱՅԻՑ» շաբաթաթերթի № 13-ի մէջ Բ. Ի. տառերի տակ թարգմտված մի պարոն, խօսելով «Ժամանակի» մասին, ասում է, թէ վերոյիշեալ յօդուածի մէջ լայնութեամբ են շատ հետաքրքրական եւ ճշմարիտ մտքեր թէ «Մուրա» անագործի մասին եւ թէ մասնաւորապէս իմ այդ աշխատութեան մասին: Ես ենթադրում եմ, որ պ. Բ. Ի. այնքան ծանօթ է առարկային, որ կարողացել է իմ աշխատութիւնը քննել եւ այդ քննութիւնից դուրս բերել այն, որ Ս. Հախումեան ճիշդ է ասում: Ուրիշ կերպ չէ կարելի հասկանալ պարոնի կողմից հեղինակաւոր ոճով յայտնած այդ կարծիքը: «Новое Обозрение» լրագրի մէջ էլ տպված էր մի յօդուած «Ժամանակի» մասին եւ յօդուածի հեղինակ պ. Սան-Ջազէն յայտնել էր, որ Հախումեանի գրածը ինձ դէմ անձնական հաշիւների արդիւնք է: Եւ երբ պ. Բ. Ի. կարծում է, թէ ճիշդ է ինձ դէմ գրածը, նշանակում է, որ նա, ուրեմն, ունի իր հիմքերը, իր փաստերը:

Ահա այդ պատճառով էլ ես հրապարակով դիմում եմ պ. Բ. Ի.-ին եւ առաջարկում եմ նրան հաստատել «ԱՐՈՆԱՅԻՑ»-ի մէջ իր ասածը, հաստատել փաստերով, հիմնված իմ աշխատութեան վրա: Ես գրել եմ իմ աշխատութիւնը, ուսումնասիրելով բազմաթիւ աղբիւրներ, կշռադրելով շատ ու շատ փաստեր, ուրեմն եւ կարող կը լինեմ պատասխանել պ. Բ. Ի.-ին, դուրս եւ ապացուցանել իմ հաշիւների եւ եղբակցութիւնների ճշգրտութիւնը:

Հաւատացած եմ, պ. Բ. Ի., որ դուք ձեր խօսքի տէրը կը լինեք եւ յանկարծ ձեզ այնպէս չէք ցոյց տալ հասարակութեան, որ գրել էք ձեր վերոյիշեալ տողերը առանց ալ ու ձախ նայելու, առանց հիմքի եւ գիտակցութեան: Ապա ուրեմն, ձեր ապացուցանելը:

Ապատում եմ:

Լէօ

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, օգոստոսի 4-ին

Մեր ժամանակները,—երբ բոլոր պետական եւ մի քանի մասնաւոր հիմնարկութիւններում աշխատելու ժամանակամիջոցը տեւում է մինչեւ 6—7 ժամ, իսկ ընդհանրապէս մասնաւոր արհեստանոցներում աշխատողները, ժամանակամիջոցը որոշելով թողնված է նրանց տեղերի կամքին, որոնք աշխատելու են, նայած լարմարութեանը, 13, 14, 15 ժամ,—Թիֆլիսի

եթէ ասենք, իր յիշեալ քարայրների վրա տնտեսականաւոր եւ իսկող կոնդուկտորներ չը կան, այլ ամեն մի ուղեւոր պարտաւոր է իր կամքով 10 ֆէնինգ գող շնանակած արկղի մէջ, աւելորդ տողեր չենք լինի գրած, գերմանական օրինապահութեան եւ ճշտակատարութեան մի օրինակ բերելու համար: Կարող է կատարել այնպէս հաւատարմ ընթերցող, որ առանց կ'օտ ք'օլ ամեն մի ուղեւոր կատարում է իր պարտքը եւ վճարում է ճանապարհի վարձը: Եթէ չենք օխալում, սոյն կարգադրութիւնը հէնց միայն Հայկէում է: Գոնէ մեր եղած միւս քաղաքներում՝ Բերլինում, Լայպցիգում եւ Մադըլբուրգում չը կայ այսպիսի քան: Ձրի ճանապարհորդները ախորժակ ունեցողների տեղ է ուրեմն Հայկէ...:

Համալսարանը հիմնվել է երկու դար սրաւնից առաջ, երբ միւս պատճառների թւում, Հոհենցոլլերներն էլ ցանկացան բացի Կոնսիդուրէրից մի բարձրագոյն դպրոց էլ ունենալ: Այնուհետեւ գլխաւոր պատճառն եղաւ յայտնի օրէնսդէս Գրիտտեան Թոմազիուսի գալը մի խումբ ուսանողների հետ: 1690/91 ճեմարանական կիսամեակին կարգաց նա դասախօսութիւններ՝ գերմաներէն, իսկ 1693 թւականին կատարվեց համալսարանի պաշտօնական բացումը: 1806 եւ 1807 թվին երկու անգամ փակվեց՝ Նապոլէոն I-ի հրամանով: Խաղաղութիւն կնքելուց յետոյ՝ կրկին բացվեց, եւ թանգարտի հրամանով վերականգնվեց համալսարանը:

պ. նահանգապետի նոր կարգադրութիւնը, որով հրամայւում է 12 ժամից աւելի չաշխատեցնել, մի բարիք կարելի է համարել մասնաւոր արհեստանոցներում աշխատողների համար: Սակայն մեզ թոյլ ենք տալիս նկատելու, որ այս նոր կարգադրութիւնը կը մնայ լոկ կարգադրութիւն, եթէ դրա գործարկելու հսկողութիւնը իշխանութիւնն իրան վրա չը վերցնէ:

Ինչպէս գիտենք, ինչպիսի կարգադրութիւնը հրատարակելուց յետոյ, միայն առաջնագործների վարպետն է, որ իր բարեխղճութեան շնորհիւ ամեն միջոց գործ է դնում, որպէս զի ամեն մի առաջնագործի արհեստանոցում 12 ժամի աշխատանքը մոտցնի Որովհետեւ համալսարանական վարպետների ընտրութեան մասնակցելու իրաւունքը չունեն ոչ աշակերտները եւ ոչ էլ քաղաքացիները, այլ սեփական արհեստանոց ունեցողները միայն, պարզ է, որ նրանք այնպիսի մարդկանց են ընտրում, որ միշտ իրանց, ուսանողների օգուտը պաշտպանել եւ ոչ աշակերտների ու քաղաքացիների Պ. նահանգապետի կարգադրութեան գործարկութիւնը թողնված է այդ ուսանողներին, որոնք աւելի շատ մարդիկ են աշխատեցնում եւ եթէ գործարկվեց հրամանը՝ ամենից մեծ վնասվողը իրանց պէտք է լինէր: Իրա համար էլ, ահա երկրորդ ամիսն է, ինչ որ հրատարակվել է հրամանը, բայց դեռ եւս գործարկութեան մէջ չէ մտնում. այսօր էլ ամեն մէկը, իր քանահաճոյքի համաձայն, ինչպէս ուզում է, այնպէս աշխատեցնում է: Անտանկի է գրութիւններս:

Մեր կարծիքով, որպէս զի պ. նահանգապետի այդ մարդասէր կարգադրութիւնը գործարկվի, պէտք է այդ շրջաբերական—հրամանը տպած կախել բոլոր արհեստանոցներում, ի գիտութիւն թէ վարպետների եւ թէ աշխատատեղերի, եւ նշանակել խիստ հսկողութիւն եւ քանցատուներին տուգանքի ենթարկել:

Արհեստաւոր

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱԳՐՈՒԹԵԱՆ

Թաւրիզ, յուլիսի 26-ին

Թաւրիզի հայուհեաց բարեգործական ընկերութեան վարչութիւնը Բաթումից, մի քանի երեսօտանոցների միջոցով, իբր նուէր, ստացել է 489 կտոր ընթերցանութեան գնահատել գրքեր, այլ եւ այլ հաստատութիւններին եւ գրադարաններին նուիրելու նպատակով, մի հատ էլ մտազական լուստեր:

Վարչութիւնն յայտնում է իր շնորհակալութիւնը նուիրատու անձանց:

Փոխ-նախագահ՝ Հ. Գրիքիէլը

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան ցուցահանդէսում ազատ տեղեր շատ քիչ են մնացել իրերի համար. իսկ մի քանի բաժիններում տեղի պակասութիւն է զգացվում: Ցուցահանդէսի գլխավոր շինութեան մէջ ներկայումս չինվում է մի փոքրիկ կահւարոված սենեակ՝ պատուար հիւրերի ընդունելութեան եւ նրանց հանգստութեան համար:

Թիֆլիսում եղանակը զգալի կերպով մեղմացել է: Ցերեկը, ճիշդ է, չը է անուշ, սակայն գիշերները օդը ցրտում է եւ ջերմաչափը ցոյց է տալիս 15° քառ Բեմօլերի: Ամառանոցների սկսում են վերադառնալ:

Դրանի հետ միացաւ Այոպէս էլ կոչվում է մինչեւ օրս՝ Պրիդորիանս՝ «Հայլէ վիտամբերգ» համալսարան: Տարբեր ժամանակներում ունեցել է իր լաւ եւ ծաղկեալ շրջանները: Այս տարի իսկական ուսանողների թիւն է 1737, ազատ ուսնողներին թիւը 150, որոնցից 41 հոգի ուսանողներին են. մեծ մասով Ռուսաստանի հեղուհները, որոնք, որպէս եւ ամեն տեղ, ուշի ուշով ծածկում են իրանց ազգութիւնը, նոյն իսկ մեզ հայերիս մօտ, որ բացի լաւ զգացմունքից՝ ոչ մի հակահրեական զգացմունք չենք տածում գէպի նրանց սովորաբար: Արտասահմանցիների թիւն է ընդհանուր առմամբ 733. (հայերի թիւը—5):

Որպէս եւ ամեն մի գերմանական համալսարան, Հայլէի համալսարանն էլ ունի չորս ֆակուլտէտ (բաժին). առաջնաւորական, փիլիսոփայական, իրաւաբանական եւ բժշկական: Համալսարանին են պատկանում, ի հարկէ, բոլոր կլինիկները եւ ինստիտուտները՝ բժշկական, գիւղատնտեսական, քիմիական, ֆիզիքական, բուսաբանական եւ այլն: Ինչպէս եւ մեր պետական հեղուհներին նկարագրութիւնից երեւաց, գիւղատնտեսական ֆակուլտէտում էլ այստեղ առաջնակարգ տեղ, օխալված չենք լինի եթէ ասենք՝ առաջին տեղը, չնորհիւ պրօֆեսոր Կիւնի, որ հեղինակութիւն է համարվում գիւղատնտեսութեան մէջ: Պակաս չէ նաեւ պրօֆ. Մէրկէլը: Մեր հայրենակիցներին ովքեր գիւղատնտեսութիւն են ուսանում:

Ուշադրութեան արժանի է, որ հրդեհների թիւը քանի որ մեծ է, աւելի է աւելել ըստ մասերու և իրենց տարածումը, կառավարական շրջաններում որովհետեւ է մշակել մի շարք միջոցներ, որոնք ուղղված լինէին այդ ժողովրդական զօրաշարժութեան դէմ: Մտադրութիւն կայ այդ նպատակով համաժողով հրաւիրել, նախապէս դիմելով քաղաքային, նահանգական եւ զաւառական ինքնավարութիւններին, որ ներքին յաւանքներ իրենց կարծիքները այդ հարցի մասին եւ իրանց կողմից միջոցներ առաջարկեն հրդեհների տարածման դէմ:

Երկրագործական եւ պետական կառուածների միջնորդութիւնը, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագրիչները, մշակել է արդէն եւ յետոյ պետական խորհրդի հաստատութեանը կը ներկայացնէ մի օրինագիծ, որով մտադրութիւն կայ բանալ բոլորովին նոր տնտեսական գիւղատնտեսական ուսումնարաններ: Այդ ուսումնարանները կը բռնեն միջնակարգ եւ ստորին գիւղատնտեսական դպրոցների միջին տեղը: Այժմեան ծրագրով գիւղատնտեսական թէօրային դասաւանդութիւնը կը ծառայուի է եւ ընդհանրական՝ գործնական պարագայութեանը ընդարձակում է: Միջնակարգութիւնը ընդունում է, որ գինեգործութեան ներկայիս ուսումնարանի եւ Պետական խորհրդի պահանջները ուսումնարանի ծրագրի են, որոնք կազմված են զեռ քառասունական թվականներին, գործնական կեանքի մէջ ամենից աւելի նպատակայարմարները դուրս եկան:

Պոլիտեխնիկական ինստիտուտում, որ այժմ ինկուբ է Պետերբուրգի մօտ, Լեննոյ գիւղում, եւ որի բացումը պէտք է տեղի ունենայ 1902 թ.ի աշնանը, բացի քիմիական եւ մեքենայագիտական բաժանմունքներից՝ կը հիմնվի նաեւ առևտրական նաւաշինութեան մի բաժանմունք: Ֆինանսների միջնորդութեանը չափողական համաձայնութեան դալ մի քանի ամբիօնների վերաբերմամբ ուսումնականների հետ, ուստի մտադրութիւն կայ այդ ամբիօնների համար հրաւիրել օտարերկրացի գիտնականներին:

Փեղարուեստական բարձրագոյն դպրոցներում ազատ ունկնդիրներ ընդունելու կանօնները, մայրաքաղաքի լրագրիչների ասելով, փոխված են այժմ: Նրանց թիւը սահմանափակված է 15-ով միայն: Ազատ ունկնդիրները ընդունված միայն այն դէպքերում, երբ ներքին կը կարողանան փեղարուեստական քրէնտութիւն բռնել: Նկարչի կոչումն ստանալու համար՝ ազատ ունկնդիր պէտք է բաւարար քննութիւն տայ մասնագիտական առարկաներից եւ պէտք է վկայական: Ներկայացնել, որ անցել է թէպէտև ուսումնարանի 6 դասարանների դասընթացը: Փեղարուեստական ակադեմիայի խորհրդին եւ գեղարուեստական միւս դպրոցների վարչութիւններին իրաւունք է տրվում միջնորդել, որ ազատ ունկնդիրն զիպում արժի, առանց նրանից յիշված վկայականները պահանջելու, եթէ միայն ազատ

խորհուրդ կը տային: 1—2 սեմստր ուսմանը նաեւ Հայլենում:

Աստուածաբանութիւնը ֆո արդէն յայտնի է, նորից ակադեմիա Loofs, Kautsch, Haupt եւ այլ պրոֆէսորների: Ով որ աստուածաբանութիւն ուսանելու արտօրակ ունի՝ Հայլեն ամենից ձեռնառն է այդ տեսակէտից: Մեր հայ աստուածաբաններն (այժմ հոգեւորական) էլ են այստեղ ճաշակել աստուածաբանութեան քաղաքները... Միւսներէն լաւ են բժշկական եւ իրաւաբանական բաժինները: Զուտ փիլիսոփայութիւնը եւ բնական գիտութիւնները, թէեւ առաջին երկուսի նման առանձնակի տեղ չեն բռնում, սակայն բաւականին զոնայորդի են: Պատմութիւնը, ֆիզիոգրֆան (այսինքն լեզուաբանութիւնը եւ գրականութիւնը) միջակ են, թէեւ հատ-հատ պրոֆէսորներ նշանաւոր են իրանց ճիւղերում: Համալսարանն ունի 140-ից աւելի պրոֆէսորներ եւ այլ դասաւանդներ: Ուսումնարանը մասը զտնվում է տեսչի ու սենատի իրաւասութեան տակ: Սենատի անդամներն են տեսչը, իր անձնապետները, չորս ֆակուլտետների ղեկավարները, հինգ ընտրված ordentlich պրոֆէսորներ եւ համալսարանի դասաւանդները: (Ուսանողների դասեր վճելը եւ բնագիտութիւնը կախված է գլխավորապէս դասաւանդից: Տեսուչը եւ սենատականները ընտրվում են տարեկան մի անգամ պրոֆէսորների կողմից: Այս տարի էլ ընտրվեց նոր տեսուչ եւ իր պաշտօնը հանդիսաւոր կերպով

ունկնդիր առանձնապէս տաղանդաւոր անձնաւորութիւն է:

ՄԱՆՊԻՍԻՑ մեզ գրում են. «Օգոստոսի 12-ին, կիրակի օրը, կայացաւ Գրիգոր Զանչեանի հոգեհանգիստը, որ գրաւել էր անագին թիւով հասարակութիւն: Պատարագի միջոցին Արաքս քառանկա Բագրատունի մի ազգու ճառարտասանեց՝ զրուստելով այն առաքնութիւնները, որոնցով լի էր Զանչեանի սրտը: Ապա պատարագից յետոյ եկեղեցու դաւթում, որ յատուկ սեղան էր պատարագեւել եւ որի վրա դրված էր երկու պսակ՝ կառարկեց հոգեհանգիստի արարողութիւնը: Հոգեհանգիստի միջոցին գերասան Ա. Յարութիւնեան ոգեւորված ճառ կարդաց, նկարագրելով այն միջնակարգ, որ տեղի ունեցան հայկական անօրինակ արհեստներով: Ապա ազգու խօսքերով չեղանք այն դերը, որ խաղաց որբանամ Զանչեանը՝ խնամելով այն թանգագին աւանդը, որ մնաց հայկական կոտորածներից: Պ. Յարութիւնեանի ճառը շատերին լացացրեց:

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են. «Ամսի 12-ին փառաւոր կերպով օծվեց Դիլիջանի հայոց նոր եկեղեցին, որ կառուցել է տիկին Տէր-Յակովբեանց մեծ ծախքով ի յիշատակ իր հոգեւորական ամուսին Հ. Տէր-Յակովբեանցի, որը թաղված է եկեղեցու արեւմտեան դռան մօտ:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Օգոստոսի 10-ին, Ն. Թանգաթիւրեանի դանիմում, օր. Պետրոսեանի (Բագրատունի) պարագիծի տեսչի (հի)՝ տեղական սիրողների եւ կոնսերվատորիայի ուսանող Բ. Բաղդասարեանի մասնակցութեամբ արվեց «Մանկական երեկոյթ», կենդանի պատկերներով եւ պարերով: Երեկոյթը կարգացրին հայ եւ ռուս լեզուներով ոտանաւորներ, ներկայացրին հազուատներով «Նեքիտ» հայերէն, իսկ ռուսերէն «Жена Ямидина»: Բացի այդ՝ Ե. Բաղդասարեանը կազմել էր երեկոյթական երգերի խումբ, որը երգում էր հայ եւ ռուս լեզուներով: Շնորհակալութեան արժանի են յարգելի օրիորդը եւ միւս կարգադրիչները, որոնք ամեն ջանք գործ էին դրել երեկոյթը ուսուցողները, մանաւանդ՝ երաժիշտ-ուսանող Ե. Բաղդասարեան, որ երաժիշտութեամբ մասնակցում է բարեգործական նպատակով արվող ներկայացումներին, համերգներին եւ բաւականութեամբ պատճառում ներկայ եղող հասարակութեանը: Երեկոյթի մուտքը քիչ էր, որովհետեւ գործի սկզբում շատ շատերն էին խոտաբերել օգնելու, իսկ երեկոյթի օրը խորհուրդ էին տալիս յետաձգել, որովհետեւ իրանք ձեռները ծախել էին եւ ոչինչով չէին օգնել: Ցանկալի էր, որ այդ տեսակ մանկական երեկոյթներ արվէին մի քանի անգամ: Շուշու պէս գաւառական քաղաքում դրանք շատ նպատակայարմար երեկոյթներ են: Մեր քաղաքում երեկոյթները գուրկ են լուրջ դաստիարակութիւնից, կրթութիւնից եւ այդ տեսակ հոգեկան զուարճութիւն պատճառող երեկոյթներից:

Առանձնեց յուլիսի 12-ին:

Որովհետեւ տեսչի պաշտօնի ստանձնումն առանձին արարողութեամբ է կատարվում ամեն անգամ, ուստի աւելորդ չենք համարում շատ կարճ կերպով նկարագրել: Արդէն առաւօտանից համալսարանի ընդարձակ դահլիճը զարդարված էր փառաւորապէս Մօտ 11 ժամին երաժշտական խումբը սպասում էր վերնաշրջանում հանդէսի սկզբունք: Հրաւիրված բարձրաստիճան մարդիկ ներս էին մտել ուսանողական ստուար բազմութեան հետ եւ տեղ բռնել դահլիճում երկուսն ընդմիջեան հետ: Ներս մտան նաեւ... ուսանողական ընկերութիւններ... պաշտօնական ներկայացուցիչներն իրանց պաշտօնական զգեստներով (բաւականին նման գիւղատնտեսական հասարակութիւն) եւ զբոսականներով: Այս «ուսանողական ընկերութիւններին» նպատակն է գիտութեան զանազան ճիւղերից դասաւանդութիւններ կարգաւորված մտաւոր հաճոյք ընձեռել իրանց անդամներին եւ ընկերական կապեր հաստատել իրար հետ: Շատ չնչին տոկոսն է միայն ձգտում երկրորդ կէտի իրագործման եւ զուարճութեամբ պարագում՝ համալսարանը ժամանակ: Շատ պարզ է, որ դասաւանդութիւնից յետոյ դարձելու էլ կը կոնծին, գինի էլ, եթէ կարողութեամբ Այս ընկերութիւններն ամսին մօտ օրերս «Մշակութան» մի յօդուած դուրս եկաւ Տ. Պալաքեան ստորագրութեամբ, բայց այնքան օխալ տեղեկութիւններով եւ անգիտօրէն կազմված, որ անհրաժեշտ է մի զուտ վիճակագրական

երկկայ համարի հեռագրիչների բաժնում, Բերլինից ուղարկված այն հեռագրում, որ վերաբերում է Թրիգրի կայսրուհուն, մի օխալ է սպրդել:—Փոխանակ տպելու շրջը թէ ամենապարզ է եղել, տպվել է շրջը թէ ամենաանհեղինակ է:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Daily Chronicle» լրագրի թղթակիցը Պարիզում խօսակցութիւն է ունեցել օսմանեան բանկի կառավարի հետ Ֆրանս-թիւրքական ընդհարման վերաբերմամբ: Վերջինը գործերի դրութիւնը գտնում է շատ լուրջ: Այն անցքերը, որոնք նախքան գրում են լրագրիչներում, —յայտնեց նա,—ընդհարման երկրորդական պատճառներն են: Գլխաւոր պատճառները առայժմ թաղնված են միւս վարագոյրի ետեւ: Բանկի կառավարիչը մի եւ նոյն ժամանակ ակնարկեց, որ Ֆրանս-թիւրքական ընդհարման մէջ պէտք է որոնել Գերմանիայի մատը: «Local Anzeiger», խօսելով նոյն ընդհարման մասին, ասում է: Թէ Պարիզում ոչ ոք լըր-յութեամբ չէ նայում այդ հարցին: Փաղաքական շրջաններում հաւատացնում են, որ ամենինչ կը սահմանափակվի նաւատորմ ու դարկիւն: Պարիզի թիւրքական շրջերը, Լատ երեկոյթին, սուլթանի այժմեան ընթացքը բացատրվում է պայտասական յօլիսիտ կոսակցութեան ճնշմամբ, ուստի եւ նա հարկաւոր է համարում զիջանել միայն ծայրայեղ միջոցների առաջ:

«Arménie» լրագրի գրում են Կ. Պօլից, թէ հիւսիս-արեւելեան Միացեալ-Նահանգների դեսպանութիւնը, Բ. Դրան արձակած հրամանով, ստացաւ 95,000 զօլլար, որպէս վարձատրութեան այն վնասների, որ կրել էին այդ պետութեան հպատակները հայկական վերջին կոտորածների ժամանակ:

«Frankfurter Zeitung» լրագրում տպագրված է մի երկար թղթակցութիւն կապալաւորի, որի մէջ վերին աստիճանի մասլ գոյններով է նկարագրվում իրերի դրութիւնը: Կապի գաղափարութեան մէջ, թղթակիցն ասում է, թէ ներկայումս անգլիացիները մաշտաւում են ոչ միայն հարաւ-արեւելեան հանրապետութիւնները տրեւելու, այլ նաեւ Կապի գաղափարութեանը չը կորցնելու համար: Դիտելով թիւրքական անգլիացիների դէմ եւ պատմութիւնը հետզհետեւ աւելի եւ աւելի տարածվում են երկրի մէջ եւ անգլիացիների գործը դարձ ընդհանուր՝ դիմադրելու պատմութեանը՝ ապագային են դուրս գալիս: Նրանց գործի թիւը շատ քիչ է, որպէս զի կարելի լինի ճշել անպատմութիւնը: Այժմ հօլանդացիները կանցնեն բօշոյնների կողմ եւ իրանց զենքերը կը դարձնեն անգլիացիների դէմ: Հէնց հիմա էլ արեւելեան զինուորը յաճախ միանում են բօշոյնների զորքերին: Այն դէպքերում, երբ անգլիացիներն աշտուղում է բռնել այդ «դաւաճաններին», նրանք առանց այլեւայլութեան կարող են փախչողներին եւ չրթակալ դիւղերի ու ազարակների ազդարանութեանը բռնի միջոցներով ստիպում են ներկայ լինել մահվան պատիժներին: Անգլիացիները յոյս ու-

նեն այս միջոցներով սարսափ գցել հօլանդացիների վրա, բայց նրանց ջանքերը հակառակ հետեւանքներ են ունենում: Նրանք աւելի են գրգռում հօլանդացիների դայոյթն եւ ատելութիւնը դէպի անգլիացիները: Անգլիացիները հարկադրում են զինուոր դրել նաեւ գերմանացի գաղթականներին, բայց այդ փորձերը ամեն անգամ անաջողութեան են հանդիպում, նորից գերմանական կառավարութեան միջամտութեան:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԴՈՒՍՄԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

16 օգոստոսի

ՊԱՐԻԶ. Կոստան հասաւ Պարիզ եւ անմիջապէս խօսակցութիւն ունեցաւ Դէկլատսէի հետ:—Հերքելով անգլիական մի լրագրի հաղորդած տեղեկութիւնը, Կոստան ասաց, թէ իսկոյն կը վերադառնայ Կ. Պօլիս, հէնց որ տարածայնութիւնները վերացված կը լինեն:

ԿՕՊԷՆՀԱՅԷՆ. Յունական թաղաւորութեանը ղեկավար ղէպի Թրէզնիսթորգ ամրոցը:

ՄԱՆԻՐԻ. Սպանական ջրերում զորամարտներ կատարելու ժամանակ, անգլիական մի ականանաւ ջրատոյգ եղաւ Լինէա-դը-Կօնտէպ-արայի մօտ: Անգլիական նաւատորմը եկան ազատելու նաւը, բայց սպանական հրաշանաւ ձիգները թոյլ չը տուին. այն ժամանակ անգլիական աւելի բազմաթիւ նաւատորմը եկան եւ բարձրացրին ականանաւը, հակառակ սպանացիների բողոքի: Այս դէպքի մասին շատ են խօսում:

ԿԻՆԿ. Երէկ ցերեկով հրդեհ սկսվեց Դիւպրի ափերի վրա գտնվող փայտեղէնի պահեստներում: Այդ տեղերում դարձված են փայտի հազարաւոր սաժէներ: Այրվել է մինչեւ այժմ 150 սաժէ: Հրդեհը չարեւակվում է:

ՆԻՇԻՆ-ՆՕՎՅՕՐՕԴ. Մօտ օրերում վերջացող օտմանմանը, հակառակ նախադաշնակութիւնների, շատ աշխոյժ անցաւ: Երկրորդութիւնը թէ առեւտրային մեծ քանակութեամբ, թէ բարձր գներով եւ թէ վճարների ճիշդ հատուցմամբ, չէ համապատասխանում Պետերբուրգի այն շրջանների յոռեան հայեացքներին, որոնք մօտիկ են բոսայական եւ այլ սպէկուլացիաներին, նոյնպէս եւ այն մարդոց մասլ հայեացքներին, որոնք ցանկանում են իրանց անձնական կորուստներին եւ անաւորութիւններին անտեսական ընդհանուր նշանակութիւն վերագրել: Տօնախմբաւ բարեկամող եղբ ճիշդ բացատրութիւն տուեց այդ օրաւարութեանը եւ խրախուսել կերպով ներգործեց առեւտրական այն շրջանների վրա, որոնք իրանց չաները եւ հայրենիք հիմնում են համաժողովրդական պահանջի առարկաների վրա:

17 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Բիւլլետեններ իշխան Եւգենի Մաքսիմիլիանովիչ Ռօմանովսկու Լէյխտնէրգ-գեան դքսի առողջական դրութեան մասին: Բիւլլետեն օգոստոսի 16-ից. «Հիւանդութիւնը, որ ունէր վերջին տարիներս իշխան Եւգենի Մաքսիմիլիանովիչ, այս տարվայ դարմանից ընդունեց սպանական ընտանորութիւն. ժամանակ առ ժամանակ նկատվում էին

լին էր, Թօրովի անունով, բոլոր ուսումնասցիներէն, հայերից, սերբերից եւ բոլորներից սիրված մի երիտասարդ. ի միջի այլոց, տեղիս հայ ուսանողներն էլ պսակ դրին դազաղի վրա: Պ. տեսչի տուած տեղեկութիւնից երեւաց, որ համալսարանը մի քանի անձինքներից դրամական նուէրներ է ստացել այլ եւ այլ նպատակներով: Այսպէս օր. Կօմէրցիէնրատ ալ, Հիւրենը նուէրել է ուսանողական հիւանդանոցի գանձարանին 100,000 մարկ (մօտ 48,000 ռուբլի): Հայտնաւորութիւնից յետոյ՝ մի ստորին պաշտօնեայ մօտեցաւ հին տեսչին, հանեց տեսչական պատմութեանը եւ հազցրեց նորընտիր տեսչին, որով եւ վերջացաւ հին պաշտօնավարութիւնը:

Սովորութիւն է, որ ամեն մի նոր տեսուչ պիտի ճառ ասէ իր մասնագիտութեան վերաբերեալ: Նոր տեսուչն էլ, իբրեւ ուսմանական գիտութիւնների պրօֆէսոր, մի հայեացք դրեց Լոււ-դովիկոս XIV-ի ժամանակի շրջանի վրա՝ առանձնապէս յիշատակելով Մօլիէրի գրական գործունէութեան առանձնապատուկ կողմերը: Ժառով էլ վերջացաւ հանդէսը՝ երաժշտութեան նուագակցութեամբ, եւ տեսուչը, սենատը, սենատը դուրս եկան դահլիճից: Զալից յետոյ, «Witte-kind» կոչված այգում երաժշտութեան եւ ուսանողական զուարճական համախմբում կար, ըստ սովորականին, նորընտիր տեսչի պատուին:

Ե. Թանաճորեան

Электротечатня Грузин. Изд. Т—ва, Б.-Ванская ул.